«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Ռաֆիկի Մկրտչյան

Ուսումնական հաստատություն՝ Կոստան Զարյանի անվան թիվ 117 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն----------3 էջ

2. Վեց տարեկանների սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին---

---------- 4 էջ

3. Եզրակացություն---------- 15 էջ

4. Օգտագործված գրականության ցանկ---------- 16 էջ

«Դպրոցին պատրաստված լինել չի նշանակում

կարդալ, գրել և հաշվել կարողանալ: Պատրաստ լինել

դպրոցին նշանակում է պատրաստ լինել սովորելու այդ

ամենը»:

Լ. Ա. Վենգեր

Ներածություն

Դպրոց ընդունվելը երեխայի կյանքում նոր փուլի սկիզբ է, որով սկսվում է մուտքը գիտելիքների աշխարհ,առաջ են գալիս նոր իրավունքներ և պարտականություններ ,մեծերի ու հասակակիցների հետ հաճախ բարդ ու բազմազան հարաբերություններ:

Դպրոցականի հոգեբանական պատրաստվածության խնդիրը հոգեբանութբան մեջ նորություն չէ, այն այժմ էլ շատ արդիական է:Ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս ,որ երեխաների 30-40 տոկոսը դպրոցի առաջին դասարան է գալիս ուսուցման համար անպատրաստ, այսինքն նրանցում անբավարար են ձևավորված դպրոցական պատրաստվածության բաղադրիչները ՝ սոցիալական ,հոգեբանական, զգացմունքային-կամային :

Դպրոց գնալը շրջադարձային է երեխայի կյանքում:Ուստի հասկանալի է այն մտահոգությունը , որը դրսևորում են և մեծերը,և երեխաները դպրոց հաճախելու հետ կապված:Ծնողները սխալվում են , երբ կարծում են ,որ իրենց երեխան պատրաստ է դպրոց գնալ ,քանի որ արդեն կարողանում է գրել , կարդալ ու հաշվել:Չնայած դրան , երեխան կարող է դժվարությամբ յուրացնել դպրոցական ծրագիրը:Պատճառը ուսումնական հաստատություն ընդունվելու համար դպրոցական պատրաստվածության բացակայությունն է :

Այսօր երեխան դպրոց է ընդունվում 6 տարեկանից: Սրա հետ կապված առաջանում են բազում հարցեր:Եթե 6 տարեկան երեխան սկսում է սովորել դպրոցում ,արդյո՛ք սա նշանակում է ,որ նա արագ է զարգանում ,օգտակար է արդյո՞ք այս տարիքում ներառվել ուսումնական գործունեութբան մեջ , ի՞նչ է նշանակում հոգեբանական պատրաստվածություն դպրոցին:

Նման և այլ հարցերի պատասխանները գտնելու համար նախատեսում ենք մանկավարժահոգեբանական տեսական և գործնական հետազոտությունների ուսումնասիրություն և վերլուծություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրութբան արդյունքում բացահայտել 6 տարեկան երեխաների սոցիալ- հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին, հետազոտության խնդիրը՝ որքանո՞վ են 6 տարեկան երեխաները պատրաստ դպրոցին:

Վեց տարեկանների սոցիալ- հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին

1.**Ուսումնական գործընթացը և 6 տարեկանների անհատական հոգեբանական առանձնահատկությունները**

Յուրաքանչյուր ուսուցիչ իր գործունեության ընթացքում առնչվում է սովորողների տարիքային զարգացման օրինաչափություններին և ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար առաջնորդվում է դրանցով:

Կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է երեխայի կյանքի 6-ից 10 տարեկան հասակը: Սա անցման այնպիսի շրջան է ,որտեղ երեխանիր մեջ միաժամանակ կրում է ինչպես նախադպրոցականի , այնպես էլ դպրոցականի գծեր: Այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում մարմնի բոլոր օրգաններում և հյուսվածքներում: Կմախքի ոսկրակալումը դեռեւս չի ավարտվում, դրա հետևանքով այն խիստ ճկուն է ու շարժուն: Ահա թե ինչու կրտսեր դպրոցականի՝ սեղանի ու նստարանի առջև ճիշտ դիրքով նստելը երեխայի ֆիզիկական զարգացման և կեցվածքի ձևավորման կարևորագույն պայմաններից է:

Ձեռքերի մատնահատվածների ոսկրացումն ավարտվում է 9-11 տարեկանում, իսկ դաստակինը՝ 10-11 տարեկանում: Կարծում եմ՝ արդեն հասկանալի է, թե ինչու կրտսեր դպրոցականը հաճախ շուտ է հոգնում գրավոր հանձնարարություններ կատարելիս, նա արագ և երկար ժամերով չի կարող գրել, և շատ հաճախ ձեռագիրը գեղեցիկ չի լինում, ձեռքը արագ հոգնում է: Հետևաբար հատկապես առաջին և երկրորդ դասարանի երեխաներին ծանրաբեռնել չի կարելի:

. Խաղային պահանջմունք

Ծննդյան պահից մինչև դպրոց հաճախելը երեխայի առաջատար գործունեությունը խաղն է: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*:Զարգացման հաջորդ փուլի՝ուսուցման անցումը կախված կլինի նրանից , թե որքանով է երեխան հաջող յուրացրել խաղի փուլերը, քանի որ դպրոցը ևս մի հաստատություն է ,որը ունի իր կանոնները, խաղացողները: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ և երեխային հնարավորություն է ընձեռնվում խաղալով զբաղվել ուսուցմամբ: Յուրաքանչյուր ծնող , մտածելով երեխայի դպրոց գնալու պատրաստվածութրան մասին, հաճախակի պետք թ երոխայի հետ խաղա ցանկացած խաղ/ուսուցողական, դերային, շարժական/:

. Շարժվելու պահանջմունք

Մեծ է նաև *շարժվելու պահանջմունքը*, հետևաբար, թե՛ ծնողը, թե՛ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Կարելի է նաև հմտորեն կազմակերպե լերեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը:

. Տպավորություններ ստանալու պահանջմունք

Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց
կարևոր *է նոր տպավորություններ ստանալու պահանջը*, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը:

. Դրդապատճառների ձևավորում

Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում *սոցիալական դրդապատճառների ձևավորումը,որն ի հայտ է գալիս2-3 դասարաններում:* Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր ե նխաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

. Կամքի ձևավորումն և զարգացումը

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացութլուններից է կամաձինության զարգացումը,որը երկարատև գործընթաց է և սկսում է ուսումնական գործունեության ընթացքում:Ձևավորվում է կամքը ,որը անընդհատ գործընթաց է ,հետապնդում է նոր նպատակների հաղթահարում:Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով/պահանջ ,ցուցում,օրինակ/,սակայնզարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվել սեփական պահանջներով,ցանկություններով,ձգտումնեևով:Կարևոր բնութագրերից է նաև ինքնուրույնությունը,որին դրդում են մեծահասակները:

. Իմացական ոլորտի զարգացում

Հիշողություն:Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը:Երեխային անհրաժեշտ է մտապահել մեծ

քանակությամբ ինֆորմացիա ը վերարտադրել այն։Չտրաապետելով հատուկ հմտութըունների՝երեխան հիշում է մեխանիկորեն,սակաըն մեծ քանակի նյութի մտապահման ընթացքում դա հետզհետե դժվարանում է։Անհրաժեշտ է հմտացնել երեխային նկարներ և փոքրիկ տեքստեր մտապահելուն։

Ուշադրություն։Ուսումնական գործընթացը ենթադրում էերեխայի ինքնակառավարում,ինչը հնարավոր է իրականացնել կամածին ուշադրության դեպքում։Ուսումնական սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը,իսկ ծնողի,մանկավարժի դերը կայանում է նրանում,որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը,երևույթների էության ըմբռմանը։Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասակների օգնութըամբ երեխայի մոտ զարգանում էուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը։

Մտածողություն։Այս տարիքում առաջին պլան է մղվում մտածողության զարգացումը։Այն դառնում է ավելի տրամաբանական,ինքնուրույն , ճկուն։Սկզբնական շրջանում այն դեռևս պատկերային բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը նպաստում է վերացական մտածողության զարգացմանը և առարկայական մտածողությունը աստիճանաբար վերափոխվում է վերացական մտածողության։

Խոսք։Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում է խոսքը։Ծնողը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր/գրքի ընթերցում, ֆիլմի դիտում,խոսքի ունկնդրում/,ստեղծելով արտահայտվելու և շփվելուհնարավորություններ,ձևավորելով բավարար բառապաշար։Այս տարիքում պետք է երեխային նախապատրաստել նաև գրավոր խոսքի ձևավորմանը,որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջողգործունեություն է։

2.Վեց տարեկան երեխաներին բնորոշ ճգնաժամային հոգեվիճակի էությունը

Դպրոցում սովորելու համար սոցիալական պատրաստվածության ձևավորման մեխանիզմները հասկանալու համարանհրաժեշտ է կրտսեր դպրոցական տարիքը դիտարկել 6-7 տարվա ճգնաժամի պրիզմայով: Հոգեբանության մեջ ,,ճգնաժամ,,նշանակում է երեխայի զարգացման մի փուլից մյուսըանցումային շրջան: Ճգնաժամը ծագում է երկու տարիքային հանգույցում ը հանդիսանում էզարգացման նախորդ փուլիավարտը և հաջորդի սկիզբը:6 -7 տարվա ճգնաժամը ի հայտ է գալիս դպրոցական ուսուցման սկզբի հետ:Ճգնաժամի սրության աստիճանը կախված է նրանից ,թե որքանով է երեխան պատրաստ հաջորդ տարիքային փուլին,կյանքի նոր պահանջներին:Փորձը ցույց է տալիս ,որ կյանքի հաջորդ փուլին պատրաստված երեխաները ավելի հեշտ են հարմարվում նոր իրավիճակներին՝տարիքայինմի փուլից մյուսը անցնելիս,թեև կան երեխաներ ,որոնք 6 տարեկանում դժվարությամբ են հարմարվում դպրոցին:Ճգնաժամը հանդիսանում է մտավոր զարգացման պարտադիր ուղեկից:Փոխվում են ոչ միայն անհատական և մտավոր գործընթացները,այլև ամբողջուփրամբ վերակառուցվում է երեխայիգիտակցական մակարդակը:Երեխայի վարքագծում ճգնաժամային նշաններիի հայտ գալը վկայում է այն մասին ,որ նա անցել է ավելի բարձր տարիքային մակարդակ:Հետևաբար, ճգնաժամը պետք է դիտարկել որպես երեխայի մտավոր զարգացման բնական երևույթ: Վերջին տարիներին 6-7 տարվա ճգնաժամի սահմաններում տեղաշարժ է տեղի ունեցել դեպր 6 տարեկան:Որոշ երեխաների մոտ փոփոխությունները ի հայտ են գալիս 5,5 տարեկանում:Ճգնաժամի ավելի վաղ առաջացման մի քանի պատճառ կա:

1. Եթե մինչև վերջերս6 տարեկան երեխային վերաբերվում էին ինչպես նախադպրոցականի, այժմ նրաննայում են որպես ապագա դպրոցականի:6 տարեկան երեխայից պահանջվում է, որ նա կարողանա կազմակերպել իր նոր գործունեությունը,պահպանի այն կանոնները, որոնք ավելի ընդունելի են դպրոցում,քան նախադպրոցական հաստատությունում:

2. Բազմաթիվ փորձարարական ուսումնասիրություններ ցույց են տալիս ,որ այսօրվա 6 տարեկան երեխաների ճանաչողական կարողությունները գերազանցում են 1990-ականների իրենց հասակակիցներից՝պայմանավորված հոգեկան զարգացման տեմպի արագացմամբ:
3. Կրտսեր դպրոցական տարիքը բնութագրվում է մարմնի ֆիզիոլոգիական փոփոխություններով:Վերջին տարիներին նկատվում է երեխայի մարմնի հիմնական ֆիզիոլեգիական համակարգերի ավելի վաղ հասունացում:Սա նույնպես ազդում է 6-7 տարվա ճգնաժամի նշանների վաղ դրսևորման վրա:
4. Այս ճգնաժամի հիմնական բաղադրիչը ըստ Լ. Ս. Վիգոտսկու այն է, որ երեխան սկսվում է կողմնորոշվել իր զգացմունքներում,իր հուզական ապրումներում:Նա սկսում է հասկանալ ինքն իրեն,իր համար իմաստավորվում են սեփական զգացմունքները: Բացի այդ երեխան ստանում է սոցիալական կարգավիճակ աշակերտի,որն ինքնինստեղծում է նոր հարաբերությունների մակարդակ շրջապատող աշխարհի հետ,նոր պահանջներ ու պարտականություններ:Այս ամենի շնորհիվ նրա մոտ նոր վերաբերմունք է ձևավորվում իր անձի նկատմամբ:
5. Կյանքի 7-րդ տարում ի հայտ է գալիս սեփական գործունեությունը վերլուծելու , սեփական կարծիք կազմելու ունակություններ,հետևաբար 6-7 տարեկան երեխաների ինքնագնահատականը և ինքնագիտակցությունը սկսում են ավելի նկատելի դառնալ: Ինքնագիտակցության զարգացման համար պայման են հանդիսանում.

. մեծահասակների հետ շփվելու երեխայի փորձը

. հասակակիցների հետ շփման փորձը

. երեխայի անհատական փորձը

. երեխայի մտավոր զարգացումը

Ինքնագիտակցության ձևավորումը հիմք է հանդիսանում ներքին սոցիալական դիրքորոշման համար:Երեխայի ներքին սոցիալական դիրքորոշման հետ ձևավորվում է նոր կարիքը՝ «Ես ուզում եմ գնալ դպրոց»: Այսպիսով , երեխան անցում է կատարում դեպի ինքն իրեն գիտակցելու փուլ և իրեն սկսում է դիտել՝որպես ֆիզիկական ինքնություն,անհատ:

3.Դպրոցական պատրաստվածության բաղադրիչները դրանց բնութագիրը

Ժամանակակից մանկավարժության մեջ «դպրոցական պատրաստվածություն» հասկացությունը այժմ փոխարինվում է «սովորելու պատրաստակամություն» հասկացությամբ:

Պատրաստվածությունը մարդու մտավոր զարգացման որոշակի մակարդակ է:Կյանքի յուրաքանչյուր նոր փուլ երեխայից պահանջում է որոշակի պատրաստակամություն:Հետրաբար ,որպեսզի երեխան նախադպրոցականից վերածվի դպրոցականի,նա պետք է փոխվի: 6 տարեկանների դպրոցական պատրաստվածությունը ներառում է մի քանի բաղադրիչներ.

. ֆիզիկական պատրաստվածություն

. հոգեբանական պատրաստվածություն

. սոցիալական կամ անձնական պատրաստվածություն

1.Ֆիզիկական պատրաստվածություն

Երեխայի ֆիզիկական պատրաստվածությունը արտահայտվում է երեխայի առողջական վիճակով, օրգանիզմի հասունությամբ, նրա ֆունկցիոնալ համակարգով ,քանի որ դպրոցական կրթությունը պահանջում է որոշակի մտավոր ր ֆիզիկական պատրաստվածություն:

2.Հոգեբանական պատրաստվածություն

Այս բաղադրիչը բազմակողմանի է,այն ենթադրում է ,որ երեխան մոտիվացված է սովորելու,նոր տեսակի հարաբերություններ կառուցելու։Այն իր մեջ ներառում է .

. ինտելեկտուալ պատրաստվածություն

. կամային պատրաստվածություն

. խոսքային պատրաստվածութլրուն

. մոտիվացիոն պատրաստվածություն

3.Սոցիալական կամ անձնական պատրաստվածություն

Դպրոցը ոչ միայն դասերն ու գիտելիքներ ստանալն է ,այլ նաև նոր մարդիկ։Երեխան արդեն գիտի ,թե ինչպես հարաբերություններ հաստատի հասակակիցների հետ,բայց կարող է նաև դժվարությունների հանդիպել։

Դպրոցական տարիքում երեխան պետք է կարողանա.

. շփվել ,հաղորդակցվել

. աշխատել խմբերում

. պաշտպանել իր կարծիքը,անհրաժեշտության դեպքում նաև փողզիջումների գնալ

. դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ

. լսել ուսուցիչներին

. հետրել դպրոցի կարգ ու կանոնին

. ժամանակին գնա դպրոց

. կատարի դպրոցական առաջադրանքները դպրոցում և տանը

4. Վեց տարեկանների սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին

Ապրելով 21-րդ դարում՝այժմ կրթության և ուսուցման կազմակերպման համար ժամանակակից կյանքի պահանջները մեզ ստիպում են փնտրել նոր ,ավելի արդյունավետ հոգեբանական և մանկավարժական մոտեցումներ՝ուղղված ուսուցման մեթոդները կյանքի պահանյներին համապատասխանելուն:

Հոգեբանական պատրաստվածություն ասելով հասկանում ենք երեխայի հոգեբանական զարգացման անհրաժեշտ և բավարար մակարդակը դպրոցական ուսումնական ծրագրի յուրացման համար որոշակի ուսումնական պայմաններում:

«Երեխայի սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին»հասկացությունը առաջին անգամ առաջարկել է Ա.Ն. Լեոնտևը 1948 թվականին:Սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մոտիվացիան ,ինտելեկտուալ զարգացումը, հուղական ևսոցիալական մակարդակը, ինչպես նաև երեխայի մեջ այն որակների ձևավորումը,որի շնորհիվ նրանք կարող են շփվել այլ երեխաների, ուսուցիչների հետ:

Երեխայի դրական կողմնորոշումը դեպի դպրոց ամենակարևոր նախադրյալն է դպրոցական ուսումնառությանը հաջող մուտք գործելու, դպրոցական պահանջներին հարմարվելու,ինչպես նաև ուսումնական գործընթացում լիարժեք ընդգրկվելու համար:

Հասակակիցների հետ շփումից սկսվում է երեխայի իրական ինտեգրումը հասարակությանը:Երեխայի ներդաշնակ զարգացմն համար կարևոր պայման է սոցիալականացումը:Ծնվելու պահից սկսած երեխան՝որպես սոցիալական էակ, իր կարիքները բավարարելու համար,պահանջում է մեկ այլ անձր մասնակցություն:Բացի այդ ,հաղորդակցման միջոցով տեղի է ունենում երեխայի

գիտակցության զարգացում,ընդլայնվում է մտահորիզոնը:Զևավորված շփվելու ունակությունները նրան հնարավորություն են տալիս հարմարավետ ապրելու հասարակության մեջ:Հաղորդակցման շնորհիվ նա ոչ միայն ճանաչում է մեկ այլ անձի,այլ՝ինքն իրեն:Դպրոց հաճախող երեխան պետք է ցանկութրուն ունենա շփվելու ,կարողանա հարաբերություններ հաստատել ինչպես մյուս երեխաների ,այնպես էլ մեծահասակների հետ:Պետք է նշել ,որ երեխայի հարաբերությունները ուրիշների հետ,այն հարաբերությունների հայելին են ,որոնք տիրում են ընտանիքում,հենց իրենց ծնողներից է երեխան շփման օրինակներ վերցնում:

Դպրոցին սոցիալական պատրաստվածությունը գնահատելու համար ,պետք է նկատի ունենալ .

. արդյոք երեխան հեշտությամբ է ինտեգրվում խաղին

. լսում է ուրիշների կարծիքն՝առանց ընդհատելու

. սպասում է իր հերթին

. կարողանում է համագործակցել խաղընկերների հետ

6տարեկան երեխաների հոգեբանական պատրաստվածությունը իր մեջ ներառում է հետևյալ բաղադրիչները՝ինտելեկտուալ,խոսքային,կամայինև մոտիվացիոն:

Ինտելեկտուալ պատրաստվածություն

Ինտելեկտուալ պատրաստվածությունը ենթադրում է ,որ երեխան ունի կոնկրետ գիտելիքների պաշար,որոշ չափով զարգացած է վերացական մտածողությունը,կամածին հիշողությունը,խոսակցական հմտությունները,ձեռքի մանր մետորիկան և այլն:

Դպրոց գնալուց առաջ երեխան պետք է՝

.գիտելիքներ ունենա իրեն շրջապատող աշխարհի մասին

.կարողանա տեղեկություններ հաղորդել իր մասին

.իմանա գույները

.տարբերակի երկրաչափական պատկերները

.հաշվի 1-10ի սահմանում

.կարողանա համեմատել տարբեր առարկաներ,ընդհանրացնել, վերլուծել

.հասկանալ մի շարք բառերի իմաստները/մեծ-փոքր,երկար-բարակ,աջ-ձախ,հեռու-մոտիկ/

.կազմել նախադասություններ,պատմի հեքիաթներ

Վեց տարեկան երեխան ընդունակ է զբաղվել մի գործով 10-15 րոպեից ոչ ավել,հետևապես նրանց ուսուցանելը դժվար է ,քանի որ ուշադրությունը կարճատև է և երեխան չի կարողանում երկար ժամանակով կենտրոնացնել ուշադրությունը մի գործողության վրա։Այդ պատճառով էլ պետք է տարբեր խաղերի միջոցով մարզել երեխաների ուշադրությունը և հիշողությունը։

Խոսքային պատրաստվածություն

Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի ակտիվ բառապաշարն ընդլայնվում է,զարգանում է ակտիվ խոսքը, երեխան սկսում է ճկուն և հստակ արտահայտել մտքերը։

Խոսքային պատրաստվածությունը սկսում է զարգանալ առարկաների ճանաչումից,հավաքական խմբերում դասակարգումից, պարզ նախադասություններ և հարցեր կազմելուց , նկար -պատմություններ պատմելուց,հեքիաթներ վերարտադրելուց։

Կամային պատրաստվածություն

Երեխայի կամային պատրաստվածութունը կարևորում է այն հանգամանքը,թե արդյոք երեխան կարողանում է կամք ցուցաբերել՝ենթարկվելով խմբային կանոններին,մանկավարժների պահանջներին:Կամային պատրաստվածության ձևավորման հետ երեխայի մոտ առաջ է գալիս ինքնուրույնությունը և կազմակերպվածությունը,ինչպես նաև սեփական վարքագիծը կառավարելու ունակությունը:

Մոտիվացիոն պատրաստվածություն

Ծնողները, մանկավարժները, երեխային նախապատրաստելով կյանքի նոր շրջանի ,երեխայի մոտ պետք է ձևավորեն սովորելու մոտիվացիա:

Դպրոցական մոտիվացիոն պատրաստվածությունը ձևավորվում է ,եթե երեխան.

. ցանկանում է հաճախել դպրոց

. ձգտում է սովորել նոր ր հետաքրքիր տեղեկություններ

. ցանկանում է ձեռք բերել նոր գիտելիքներ

Ուսումնասիրությունները ցույց են տվել ,որ դպրոց հաճախող երեխաների 30-40 տոկոսը,ընդհանուր առմամբ,չեն հասկանում ,թե ինչ են անելու դպրոցում:Սա առիթ է հանդիսանում մտածելու,թե արդյոք երեխան պատրաստ է դպրոցին:Կարևոր է նաև ,որ 6 տարեկան երեխաների խնողները հստակ գիտակցեն ,որ ուսումը ոչ թե խաղ է ,այլ մտավոր աշխատանք ,ինչպես նաև որոշակի կանոններ սովորելու պատրաստակամություն:

Մինչ դպրոց գնալը երեխայի մոտ պետք է ձևավորված լինեն հետևյալ պատկերացումները.

.դպրոցի մասին դրական վերաբերմունքի ձևավորում

. տանել և ներկայացնել երեխային դպրոցը

.նախապես խաղի միջոցով երեխային սովորեցնել դպրոցական ռեժիմի տարրեր

.կարդալ պատմություններ,հեքիաթներ դպրոցի մասին,ծնողները կարող են կիսվել իրենց անձնական դպրոցական հիշողություններով

.ամառային հանգստի ճիշտ կազմակերպումը ևս նպաստում է առաջին դասարանցիների դպրոց հաճախելուն,քանի որ ֆիզիկապես և հոգեբանորեն պատրաստված երեխան ,ավելի հեշտ է հարմարվում նոր պայմաններին:

Եզրակացություն

Այսպիսով,6 տարեկան երեխայի պատրաստվածությունը դպրոցին բարդ համակարգ է, որն իր մեջ ներառում է այն որակները, կարողությունները,հմտությունները,որոնք զարգացման և դաստիարակության շնորհիվ ձևավորվում են երեխայի հարմարվողականության աստիճանը դպրոցին:

Խոսելով 6 տարեկան երեխաների դպրոցին պատրաստ լինելու մասին՝պետք է նկատի ունենալ մտավոր, ֆիզիկական, զգացմունքային,հաղորդակցական ,անձնական որակների ամբողջությունը,որոնք օգնում են երեխային հնարավորինս հեշտ մուտք գործել նոր դպրոցական կյանք,ընդունել դպրոցականի նոր սոցիալական դերը,հարմարվել ուսումնական գործընթացին:

Իրականում ավելի շատ պատճառներ ու գործոններ կարող են լինել ,որոնք որոշում են երեխայի պատրաստվածությունը դպրոցին:Ծնողները մեծապես կօգնեն մանկավարժներին և առաջին հերթին իրենց երեխաներին ,եթե սկսեն երեխայի մոտ ձևավորելմիայն դրական վերաբերմունք ուսման և դպրոցի նկատմամբ,խրախուսեն սովորելու ցանկությունը երեխայի մեջ:

Երեխային պետք է հասկացնել ,որ սովորելը յուրաքանչյուր ժամանակակից մարդու պարտականությունն է ,և նրանից ,թե որքանով է նա սովորում,կախված է հասարակական միջավայրի ձևավորումը:

Եզրափակելով հարկ է նշել,որ անպատրաստ երեխայի համար դժվար է հարմարվել նոր փոփոխություններին: Դպրոց գնալն ,անկասկած,սթրեսային է ,քանի որ փոփոխվում է երեխայի կյանքի ձևը:Ծնողների օգնությունն այս պահին շատ կարևոր է:Ծնողները պետք է հիշեն ,որ դպրոցին պատրաստվելու համար հատկացված է 6 տարի և այդ 6 տարիների ընթացքում երեխան զարգանում է հենց դպրոց գնալու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Պետրովսկի Ա. Վ. «Տարիքային ր մանկավարժական հոգեբանություն», Երևան, 1977թ.

2.Խուդոյան Ս.Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները» , Երևան, 2004թ.

3.Гуткина Н.И.,, Психологическая готовность к школе'' ,Москва, 1993г.

4.Венгер А. Л. ,,Готов ли ваш ребенок к школе?'' , Москва, 1994г.